

Աշխարհագրություն

УДК 911.3

ՀՀ ԼԱՆԴՇԱՓՏԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԻԳՐԱՑԻԱՆ ԿԼԻՄԱՅԻ
ՔԼՈՒԲԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Պ. Գ. ԴԱՎԹՅԱՆ^{1*}, Տ. Պ. ԴԱՎԹՅԱՆ^{2**}, Ռ. Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ^{2***},
Ա. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ^{1****}

¹ ԵՊՀ քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոն, Հայաստան

² ԵՊՀ սերվիսի ամբիոն, Հայաստան

Աշխատանքում ՀՀ-ում տարածված լանդշաֆտային գոտիների համար հաշվարկվել է դիսկոմֆորտայնության գործակիցը, տարեկան միջին արժեքները, որի վերլուծության միջոցով բացահայտվել է լանդշաֆտային գոտիների միգրացիան, տրանսֆորմացիան և կատարվել է դրա հետևանքների վերլուծություն և գնահատում:

<https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.1.013>

Keywords: discomfort rate, landscape migration, landscape transformation, reference landscapes, degradation, desertification, biocenosis, biodiversity.

Խնդրի դրվածքը: Հասարակության կայուն զարգացման գրավականը շրջակա միջավայրի կայունություն է, դրա բարելավումը և օպտիմալացումը, որը սակայն մարդու գործունեության և բնական ճանապարհով շատ հաճախ խաթարվում է և հանգեցնում լուրջ հետևանքների: Կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով երկրագնդի վրա առաջանում են մի շարք բացասական երևույթներ՝ միկրոկլիմայական պայմանների կտրուկ փոփոխություն, հողերի դեգրադացիա, անապատացում, լեռնային երկրներում լանդշաֆտների տրանսֆորմացիա և վերընթաց միգրացիա [1]:

Նշված յուրաքանչյուր երևույթի ուսումնասիրումը, եթե անգամ փոքր չափով մեղմի արագ ինտենսիվ զարգացմանը, ապա հասարակությունը հնարավորություն կստանա պայքարելու ավելի գլոբալ երևույթների դեմ, որոնցից բխում են վերոհիշյալ հետևանքները:

Ելնելով վերոհիշյալից սույն աշխատանքի առջև խնդիր է դրվել ՀՀ տարբեր գոտիներում դիսկոմֆորտայնության գործակցի (ԴԳ) հաշվարկման միջոցով, բացահայտելու լանդշաֆտային գոտիների վերընթաց միգրացիան: Վերջինիս բացահայտումը հնարավորություն կտա բնակչությանը պատրաստ լինելու սպասվող հետևանքներին և պայքարելու դրանց մեղմացման համար:

* E-mail: pdavtyan@ysu.am

** E-mail: tdavtyan@ysu.am

*** E-mail: r.vardanyan@ysu.am

**** E-mail: armine.vardanyan@ysu.am

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Շրջակա միջավայրի վիճակը բնութագրող ցուցանիշներից մեկը դիսկոմֆորտայնության գործակիցն է, որը լայնորեն կիրառվում է աշխարհի շատ երկրներում:

ԴԳ համարվում է այն զգայուն չափանիշը, որը արձագանքում է շրջակա միջավայրի անգամ աննշան փոփոխությանը: Գոյություն ունեն ԴԳ-ի հաշվարկման մի շարք բանաձևեր: Առավել տարածված է Արակավայի (1960) բանաձևը, որն ունի հետևյալ տեսքը՝

$$ԴԳ=0,81T+0,01H(0,99T-14,3) + 46,3,$$

որտեղ T-ն՝ ջերմաստիճանն է; H-ն՝ հարաբերական խոնավությունը:

Ջերմաստիճանի և հարաբերական խոնավության համադրումը հնարավորություն է տալիս որոշելու կլիմայական պայմանների փոփոխությունները, հետևաբար և լանդշաֆտների վերընթաց միգրացիան:

Սակայն պետք է նշել, որ ստացված ցուցանիշները միանշանակ թույլ չեն տալիս մեր առջև դրված խնդիրը լուծելու, եթե դրանք չենք դիտարկում համեմատության մեջ:

Լանդշաֆտների միգրացիան բացահայտելու համար մեր կողմից հաշվարկվել է ՀՀ տարբեր լանդշաֆտային գոտիներում ԴԳ-ի միջին տարեկան արժեքները [2], և համեմատվել է Ա.Վ. Խոնեյանի և Բ.Յ. Հակոբյանի ստաված տվյալների հետ [3]:

Ստացված տվյալների համեմատությունը ներկայացված է աղյուսակում:

ՀՀ լանդշաֆտային գոտիներում դիսկոմֆորտայնության գործակիցի տարեկան միջին արժեքների ցուցանիշներ

Լանդշաֆտային գոտիներ	ԴԳ-ի միջին տարեկան արժեքները, 1997 թ.	ԴԳ-ի միջին տարեկան արժեքները, 2020 թ.
Կիսանապատային	57,1	59
Լեռնատափաստանային	46	49
Անտառային	45	48
Լեռնամարգագետնային	31,5	39,8
Ձյունամերձ	23,5	29,4

Աղյուսակի տվյալներից պարզ նկատվում է, որ ՀՀ տարածքում ակնհայտ է լանդշաֆտների վերընթաց միգրացիան: Այսպես, անապատային գոտում մեծացել է ԴԳ-ն և ձգտում է կիսանապատային գոտու 1997 թ.-ի ցուցանիշներին, սա ցույց է տալիս, որ հանրապետության տարածքում ընդարձակվում է կիսանապատային էտալոնային գոտին: Նույն միտումը նկատվում է նաև անտառային գոտում, որը նույնպես միգրացվում է դեպի վեր: Բացի այդ միգրացիային և անտառային լանդշաֆտների կրճատմանը նպաստել է այն հանգամանքը, որ անտառներում հայտնվել է ցաքին (չորասեր ծառատեսակ):

Դեպի վեր միգրացվում է նաև լեռնամարգագետնային լանդշաֆտային գոտին, որտեղ ԴԳ-ն մոտենում է լեռնատափաստանային և լեռնաանտառային գոտու ցուցանիշներին: Ձյունամերձ լանդշաֆտային գոտու զբաղեցրած տարածքը կրճատվում է, այստեղ ստացված գործակիցներն աճում են և ձգտում լեռնամարգագետնային լանդշաֆտների 1997 թ.-ի արժեքներին:

Ստացված տվյալների վերլուծությունը բավականին մտահոգիչ է և տեղիք է տալիս մտորելու, որը պարզ կնկատվի լանդշաֆտների միգրացիայի հետևանքների վերլուծությամբ:

Կիսաանապատային գոտու ընդարձակումը ՀՀ տարածքում կնպաստի աննախադեպ ոռոգում պահանջող տարածքների մակերեսի մեծացմանը: Վերջինս կպահանջի ոռոգման ջրի մեծ քանակություն: Այսօր ՀՀ տարածքում առկա է ոռոգման հիմնախնդիր և ավելի կարվի նշված երևույթի պատճառով: Կլրճատվեն նաև բերրի հողերը՝ մթնոլորտային տեղումների նվազման պատճառով:

Ձյունամերձ գոտու տարածքի կրճատումը կնպաստի նշված բացասական երևույթի սրմանը, քանի որ ձյունամերձ գոտին հանդիսանում է ՀՀ տարածքի գետերի սնման գոտի:

Այստեղ տեղումների քանակի նվազման, ճյան սակավ շերտի առկայության, հալոցքային ջրերի քիչ քանակի ինֆիլտրացիայի և մակերևութային հոսքի հետևանքով, կնվազի գրունտային ջրերի մակարդակը և ՀՀ տարածքում գոյություն ունեցող արտեզյան ավազանների պաշարները, կառաջանա խնդիր:

Նշված երևույթի դեմ պայքարը, քանի որ գյուղալ բնույթ է կրում, ապա հանրապետության տարածքում հնարավոր չէ խնդիրը լուծել: Ուստի առաջարկվում է գոնե պայքարել երևույթի դեմ, խնայելով ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը: Նշված հիմնախնդրի դեպքում մեծ վնաս կհասցվի նաև կենսաբազմազանությանը: Կիսաանապատային գոտու ընդարձակման հետևանքով մեծ չափերի կհասնի այս գոտուն բնորոշ կենսա-ցենոզները, որոնք աչքի են ընկնում տեսակային կազմի միօրինականությամբ:

Եզրակացություն: Ըստ վերոհիշյալ վերլուծության՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1) ՀՀ տարածքում կլիմայի գյուղալ փոփոխության պատճառով տեղի է ունենում լանդշաֆտային գոտիների վերընթաց միգրացիա, որը ապացուցվեց լանդշաֆտային տարբեր գոտիներում ԴԳ-ի տարեկան միջին արժեքի վերլուծությամբ:

2) լանդշաֆտների վերընթաց միգրացիան իր բացասական ազդեցությունն է ունենում ՀՀ տարածքի ջրային ռեսուրսների նվազման, սրա հետ կապված հողերի մշակման ծախսերի ավելացման, կենսաբազմազանության նվազման վրա: Հետևաբար, անհրաժեշտ է կազմակերպել թեկուզ չնչին, բայց հետևանքները մեղմող միջոցառումներ:

Ստացվել է՝ 15.01.2021

Գրախոսվել է՝ 18.02.2021

Հաստատվել է՝ 18.03.2021

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Գաբրիելյան Հ.Կ., Խոյեցյան Ա.Վ. *Անապատացումը և հողերի դեգրադացիան Հայաստանի Հանրապետությունում: Հողօգտագործում և պետական վերահսկողություն*: Երկրորդ գիտական կոնֆերանսի նյութեր: Եր. (1998), 58–63:
2. Դավթյան Պ.Գ., Դավթյան Տ.Պ., Վարդանյան Ռ.Ռ., Հովհաննիսյան Ն.Ա., Վարդանյան Ա.Հ. Մարդու առողջության և առողջապահական տուրիզմի զարգացման համար նպաստավոր տարածքների առանձնացման նոր մոտեցման կիրառում (Լոռու մարզի օրինակով): *ԵՊՀ գիտական տեղեկագիր: Երկրաբանություն և աշխարհագրություն* **54** : 2 (2020), 108–115: <https://doi.org/10.46991/PYSU:C/2020.54.2.108>

3. Խոնեցյան Ա., Հակոբյան Ք. ՀՀ բնական դաշտային գոտիների կլիմայական դիսկոմֆորտայնության տարբերությունները և կայուն զարգացման հայեցակարգը, Կայուն հասարակական զարգացումը և Հայաստանը: Առաջին ազգային կոնֆերանսի նյութեր: Եր., (1997), 65–69.

П. Г. ДАВТЯН, Т. П. ДАВТЯН, Р. Р. ВАРДАНЯН, А. А. ВАРДАНЯН

МИГРАЦИЯ ЛАНДШАФТНЫХ ЗОН РА В КОНТЕКСТЕ ГЛОБАЛЬНЫХ ИЗМЕНЕНИЙ КЛИМАТА

Резюме

В работе вычислен коэффициент дискомфорта (его среднегодовая величина) распространенных в РА ландшафтных зон. На основании его анализа были выявлены миграция и трансформация ландшафтных зон, проведены анализ и оценка последствий.

P. G. DAVTYAN, T. P. DAVTYAN, R. R. VARDANYAN, A. H. VARDANYAN

MIGRATION OF THE LANDSCAPE ZONES OF THE RA IN THE CONTEXT OF GLOBAL CLIMATE CHANGES

Summary

In the work was calculated the coefficient of discomfort (its average annual value) of landscape zones widespread in the RA. Through its analysis, migration and transformation of landscape zones were identified, an analysis and assessment of the consequences were made.